

ների տարրական և միջնակարգ դպրոցները մեծ հանդէսներով վերանորոշեցին „մանկավարժութեան հայր“ Պետալոցցու անունն ու գործերը՝ մատաղ սերնդի սրտերում։ Դափնեայ պատկներով ու գումաւոր ծազիկներով շըջապատուեցան մեծ մանկավարժի արձաններն ու անդրիները, յայտնի և ներկայում հռչակ ու հեղինակութիւնները, որոնք թարգմանուած են բոլոր եւրոպական լեզուներով և կազմում են բոլոր մեծ ու փոքր աղջերի մանկավարժական գրադարանների ամենաթանկարգին զարգը։

Պետալոցցին իւր բարոզած գաստիարակչական սկզբունքներով միմայն իւր աղջի և հայրենակիցների աշքում չստացաւ, „մեծ մանկավարժի“ պանծալիք անունը, այլ ամբողջ աշխարհն այսօր ընդունում եւ գործադրում է նրա կրթութեան սիստեմի հիմնաքարերը՝ հետզհետէ աւելի մշակելով ու պարզաբանելով։

Հայ մանկավարժական աշխարհում եւս անծանթ չէ ղետալոցցու անունը՝ մեր պարբերական մամուլի զանազան թերթերում եւ զանազան ժամանակ լոյս են տեսնել նրա մասին կենսագրական եւ նրա մանկավարժական սիստեմին վերաբերեալ յօդուած։ Ներ, բայց հայ գրականութիւնը գեռ զուրի է նրա իսկական հեղինակութիւնների հայերէն թարգմանութիւններից, այժմ այդ փորձն էլ արուած է եւ ուրախ ենք, որ „ԼՈՒՄԱՅԻ“ էջերում, իրրեւ յաւելուած, տալիս ենք մեր ընթերցողներին Պետալոցցու նշանաւոր եւ ոչ զուտ մանկավարժական, բայց նրա հոգին ու միտքը պարունակող ժողովրդական մեպը, „Լինչարդ“ ու Գերարդուլը, որի հրատարակութիւնն իւր ժամանակին Պետալոցցու վրայ գարձեց ամբողջ աշխարհի գիտնականների եւ իշխանազնների ուշադրութիւնը։ Վեպի շարունակութիւնը կտպուի „ԼՈՒՄԱՅԻ“ միւս տարուայ գրքերում։

ՃԵՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նիւթերի առատութեան պատճառով «ԼՈՒՄԱՅԻ» այս երկրորդ գիրքը բաղկացած է 512 երեսից, այն ինչ անցեալ գիրքը բաղկացած էր 368 երեսից։ Զնայելով սուրան մենք անկարող եղանք այս հատորում ամփոփել պատրաստի նիւթերից բազմաթիւ կարեսոր յօդուածներ, որոնք մնացին հետևեալ տարուայ առաջին գրքի համար։

«Առամարի այս գրքում տպում ենք հանդ. Բաֆֆիի
«Երկու ամիս Աղ. և Սին. աշխ.» յօդուածի շարունա-
կութիւնը. այս յօդուածը վերջանում է եօթերորդ գլխով.
իսկ ութերորդի միայն հետևեալ բովանդակութիւնը կայ
գրած.

«Առաջաձոր. — Հարուստ իւզմաշու տունը: — Ոստիկա-
նութեան պրիստաւը և նրա ընդունելութիւնը: — Սպանու-
թիւն: — Խաչենի գիւղը: — Գանձասարի վանքը և վանքի
գիւղը: — Հասանջալալեաններ: — Վանի Ապերը: — Դարպաս-
ներ և Թարխանայ բերդը: — Ա. Յակովայ վանքը և Յա-
կովը վարդապետ Սիւնցին: Սալսալանի բերդը: — Ցեղ
ձոր. — Պակեսի բերը և Ուլուբար գիւղը: — Ուլուբարի քա-
ջագործութիւնը: — Աէրիի շնչ, Խնձրիստան, Հիւհս, Դաշ-
րուլաղ, Բալլուջայ և նոյն անունով գետը, Խնածախ, Խան-
քէնդի. — Շուշուայ բերդ»:

«Երկու ամիս Աղ. և Ա. աշխ. յօդուածի ձեռագիրը,
որ մենք ստացել ենք հեղինակի մեծ. այրիից, գրուած է
իւր իսկ Բաֆֆիի ձեռքով քառածալ գրելու թղթի վե-
րայ և բաղկացած է 91 կէսիջեան և 39 երկիջեան երես-
ներից. տեղ տեղ հեղինակը մատնանիշ է անում իւր յի-
շատետրի վերայ, որ պէտք է լրացնէր այս երկը. օրի-
նակ. Ե. դիմի վերջում ասում է. «Աւերակների նկարա-
գրութիւնը գրված է առանձին յիշատետրիս մէջ. նոյն-
պէս Երից մանկանց վանքի նկարագրութիւնը» և այլն.
այդ ժանոթութիւնները ցոյց են տալիս, որ մեր ձեռքը
հասած ձեռագիրը սնագիրն է և շարելիս կամ թերևս
արտագրելու ժամանակ պէտք է լրացուէր յիշատետրից:
Ցամենայն դէպս ցաւալի է, որ հեղինակին չէ յաջողել ա-
ւարտել այս ուղևորութիւնը վերահաս մահուան կամ այլ
պատճառով:

ՍՏԸՑՈՒՅՃ. ԴՐՔԵՐ

Հ. Գ. Զ. Ուսումնասիրութիւն Հայ լեզուի եւ մա-
տենագրութեան յարեալուս. Վենետիկ 1895.